ԲԱԺԻՆ 7. ԱՐՎԵՍՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 7: АРТ- ПЕДАГОГИКА
SECTION 7: ART PEDAGOGY

ՏԻԿՆԻԿԱԹԵՐԱՊԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Հայրապետյան Լուսինե
Երևանի պետական համալսարան,
Հայաստան

Համառոտ ներածական: Մեր օրերում լայն կիրառություն ստացած արվեստաբուժության արտտեխնոլոգիաներից մեկն է տիկնիկաթերապիան, որը արվեստի մանկավարժության մեջ նոր իմաստավորմամբ է բացահայտում տիկնիկների ֆենոմենը երեխայի սոցիալականացման գործընթացում: Դրա տարբեր տեսակներ առանձնանում են ոչ միայն իրենց կատարման եղանակներով, այլև երեխայի հետ տարվող աշխատանքերի ուղղվածությամբ՝ շտկողական, ինֆորմատիվ, կարգավորիչ և այլն: Տիկնիկաթերապիան հաճախ ներհյուսվում է իմագոթերապիային և դրամաթերապիային, որտեղ ևս անձի ձևավորման կարևոր հարցերից մեկը՝ նրա կերպարի ուսումնասիրությունը, դառնում է առաջնային: Տիկնիկաթերապիան նախատեսված է բոլոր տարիքային խմբերի երեխաների համար, սակայն տարբեր տարիքային խմբի երեխաների համար դրա դերը, նշանակությունն ու ազդեցությունը, կատարած գործառույթները տարբեր են: Այս հետաքրքիր արտտեխնոլոգիան իրականցվում է անհատական և խմբային ձևերով:

Հիմնախնդրին առնչվող հետազոտությունների ուսումնասիրությունը: Հայրենական գրականության մեջ տիկնիկի ֆենոմենի մասին ուսումնասիրություններ կան միայն ավանդական տոների, ծիսական արարողակարգերի ուսումնասիրությունների մեջ: Մանկավարժական տեսանկյունից մասնագիտական գրականության մեջ տիկնիկի դերակատարությունը անձի խաղային գործունեությունը կազմակերպելու և սոցիալական փոխհարաբերություններ կառուցելու գործում դեռևս խորությամբ ներկայացված չէ. քիչ են ուսումնասիրությունները, որոնցում վերլուծված են երեխայի և տիկնիկի միջև առաջացած դերային վարքի դրսևորման, հուզական կապի ձևավորման մանկավարժական

նպատակները, դրանց օգտագործման տեղն ու ձևը մանկավարժական գործընթացում: Սակայն կա հարուստ փորձ, որի ուսումնասիրության և մեկտեղման դեպքում կարելի է տիկնիկով խաղը վերածել թերապևտիկ՝ առողջապահական, շտկողական, վերականգնողական գործունեության, որը շահավետ կլիներ երեխայի՝ խաղից ուսում գործունեության ձևի անցման դժվարությունների, առաջացած կոնֆլիկտների լուծման տեսանկյունից, ինչպես նաև ավելի հասուն տարիքում իր սեռային դերի գիտակցման, դրա ինքնիրացման համար սցենարների մշակման առումով: Տիկնիկաթերապիայի մասին իրենց աշխատություններում և ուսումնասիրություններում ժամանակակից մանկավարժության մեջ հետաքրքիր ուսումնասիրություններ ունեն և գաղափարներ են առաջադրել Վ. Լեբեդևան, Տ. Ուսովան, Ա. Տատարինցևան, Տ. Շիտովը, Ի. Մեդվեդևը, Լ. Գրեբեշնիկովան և ուրիշներ, որոնց ուսումնասիրություններին անդրադարձել ենք մեր հոդվածի շրջանակներում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել տիկնիկաթերապիան՝ որպես երեխայի սոցիալականացման խնդիրների լուծման մանկավարժական միջոց:

Հետազոտության նորույթը: Առաջին անգամ ուսումնասիրվել և վերլուծվել է տիկնիկաթերապիայի նշանակությունը երեխայի սոցիալականացման մի շարք խնդիրների լուծման՝ դերային վարքի ձևավորման, շտկման, հոգեհուզական կարգավորման տեսանկյունից:

Բանալի բառեր: Տիկնիկաթերապիա, իմագոթերապիա, սոցիալական կարգավիճակ, սոցիալական դեր, հոգեհուզական ոլորտի խանգարումներ, դերային վարք, սոցիալական վարք, տիկնիկային թատրոն, կերպարային տիկնիկ, պահանջվող, սուբյեկտիվ, խաղարկային դերեր, ներառական թատրոն:

Հիմնական նյութի շարադրանքը: Երեխայի անձի ձևավորման գործոններն ու պայմանները ուղղակիորեն առնչվում են նրա սոցիալական բնութագրին, որը ձևավորվում է մարդու կենսաբանական կառուցվածքի հիմքով և ենթարկվում սոցիալական միջավայրի ազդեցությանը: Անձնավորության բոլոր հատկանիշները՝ խոսք, գիտակցություն, կամք, աշխատանքային կարողություններ, աշխարհայացք, բարոյական, գեղագիտական հայացքներ, գիտելիքներ և այլն, կարող են ձեռք բերվել միայն սոցիալական միջավայրում: Սակայն երեխաների սոցիալականացման դժվարությունների հաղթահարման համար երբեմն հարկ է լինում ձեռնարկել մի շարք միջոցներ, որոնք, մասնավորապես, վերաբերում են երեխայի սոցիալական վարքի ձևավորմանն ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված հոգեհուզական դրսևորումնե-

ին: Այս տեսանկյունից խաղը՝ որպես երեխայի առաջնային գործունեության ձևերից մեկը, մեծ դերակատարություն ունի երեխայի կյանքում: Այն տարբեր տարիքի երեխաների մոտ ձեռք է բերում նոր տարրեր, հարստանում իրավիճակային բովանդակությամբ, որի օգնությամբ երեխան հուզական լիցքաթափում է ապրում, ինչպես նաև կենցաղային, սոցիալական, զգայական նոր փորձ ձեռք բերում, որը շատ կարևոր է նրա անձի ձևավորման գործում: Խաղային այդպիսի կարևոր «գործիք» կարելի է համարել տիկնիկը, որը կարող է նշանակալից դեր կատարել երեխայի անձնային և հասարակական վարքի ձևավորման տեսանկյունից սոցիալական դերերի փորձարկման շնորհիվ:

Դեռևս հնագույն ժամանակներից տիկնիկներին վերագրվել են հատկություններ, որոնք բնութագրել են մարդու կերպարային նույնականացման հարցը: Հին հայկական ավանդական սովորություններում տիկնիկն աղջկա օժիտի անբաժանելի մասն է կազմել, որի հետ տիկնիկի տիրուհին շատ զգույշ պետք է վարվեր: Հայրական տնից տարած մոր կամ տատիկի ձեռքով պատրաստած կտորե տիկնիկը փոխարինում էր ավագ խորհրդատուներին՝ տատիկ, մայր, դառնում հոգեհարազատ զրուցակից: Այն համարվում էր շնչավոր էակ, որը տեսնում ու լսում է իր տիրուհուն, ապրումակցում նրան: Տիկնիկը կարծես թե պատրաստում է աղջկան սոցիալական նոր կարգավիճակներին ու դերերին, որոնք պիտի ստանձնի նա նոր միջավայրում:

Տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ նկատելի են նաև տիկնիկներ, որոնք, անկախ երեխայի սեռից, կարողանում են կենդանանալ, փայտաշեն, կտորե տիկնիկներից վերածվել մարդու և ապրել տիկնիկի կյանք՝ մարդեղենացված: Դրանց թվում են, օրինակ, երեխաների շատ սիրելի Բուրատինոն կամ Պինոկիոն և այլն:

Տիկնիկի հետ երեխայի կապը սկսվում է վաղ տարիքից, և դրա հետ խաղը դերային բնույթ ունի, որում արտացոլվում են հիմնականում ընտանիքը, դրանում գտնվող անձանց և նրանց փոխկապակցված կարգավիճակների ու դերերի ամբողջությունը: Երբեմն խաղում ներառվում են ոչ միայն ներընտանեկան, այլև միջընտանեկան դերեր: Դերային մոտեցման լիարժեք իրագործման համար անհրաժեշտ է նախ պարզել խաղի ընթացքում տիկնիկի տիրոջ ստանձնած սոցիալական կարգավիճակը և դրանից բխող դերի էությունը: Սոցիալական կարգավիճակը թույլ է տալիս խաղի ընթացքում «բեմադրել» տվյալ սոցիալական դերը, որի պատկերացումը երեխան ունի իրական կյանքի օրինակով իրեն շրջապատող մեծերի շնորհիվ: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ երեխայի վարքի և դրա դրսևորումների պատճառների, ինչպես նաև այլ տարեկիցների

կամ մեծերի հետ ունեցած հարաբերությունների կառուցման մշակույթի, փոխհարաբերվելու ձևի նկարագրությունն ուղղակիորեն ներմուծված է տիկնիկի հետ խաղում: Տիկնիկի համար երեխայի ստանձնած սոցիալական դերերն ուղղակի կապ ունեն տվյալ դերին բնորոշ իրավունքների և պարտականությունների կատարման հետ: Այս առումով բավական ուշարժան է երեխայի դիրքորոշումն իր ստանձնած դերի կատարման առումով:

Մանկիկային տարիքում տիկնիկը անբաժանելի մասն է կազմում տունտունիկ, բժիշկ-բժիշկ և նման սցենարներով պարզ խաղերի համար, բայց եթե մի փոքր ուշադրություն դարձնենք այդ մանկական խաղերին, կտեսնենք, որ խաղի ընթացքում տիկնիկի հանդեպ ամեն երեխա ցուցաբերում է իր մոտեցումը՝ դրանով խաղը վերածելով անհատական ստեղծագործության [6]: Ավելի ուշ երեխայի ցանկացած լուրջ գործողություն դառնում է ներկայացում՝ դերախաղի ձևով, այսինքն՝ երեխաների դեպքում խաղը, թատրոնն ու մանկական կյանքը միախառնվում են մի կետում: Երկուսից չորս տարեկան երեխաների դեպքում տիկնիկի հետ նրանք պարզապես ապրում են իրենց կյանքը՝ անգիտակցաբար խաղալով և կրելով, նաև տիկնիկին վերագրելով որոշակի դերեր: Այս տարիքում երեխան, որը փորձում է մուտք գործել սոցիալական դաշտ, սկսում է երկխոսել իր մայրիկի, հայրիկի, սեփական խաղալիքների, տիկնիկների հետ, և հենց այս տարիքում է կարևորվում տիկնիկի դերը՝ որպես միջնորդի, որն օգնում է երեխային լինել առավել արդյունավետ հաղորդակցվող:

Եթե ուշադրություն դարձնենք երեխայի տիկնիկով խաղին, ապա հստակ կտեսնենք, որ երեխան ստանձնում է իրեն հայտնի դերը և դրան համապատասխան պարտականությունների շրջանակում սկսում է կրկնօրինակել արդեն իրեն ծանոթ վարքի մոդելը՝ մոր, քույրիկի, հարազատ որևէ մեկի օրինակով: Երեխան կատարում է գործողություններ, որոնք մեկը մյուսին փոխկապակցված են, կարելի է ասել, մտածված, պլանավորված: Այս տեսանկյունից տիկնիկի հետ խաղի պլանավորման և նախատեսման համար հնարավոր է լուծել երեխայի կյանքում բազմաթիվ վարքակարգավորման խնդիրներ՝ խաղի ժամանակ տիկնիկի միջնորդությամբ երեխայի ստանձնած սոցիալական դերը նախապես սցենարավորելով և կարգավորելով, նրանից ունեցած սպասումներին՝ էքսպեկտացիաներին համապատասխան՝ երեխային օրինակելի վարքի նորմեր սովորեցնելով, որոնք ինչ-ինչ պատճառով չեն դրսևորվում կամ բացակայում են նրա վարքից: Երեխայի խնդիրը ախտորոշելուց հետո պետք է հստակեցնել, թե տիկնիկի միջնորդությունը որտեղ և ինչ չափով է պահանջվելու, սցենարի ինչ տարբերակներ են մշակվելու շտկողական գործողությունների

իրականացման համար: Ըստ այդմ՝ կարելի է կոնֆլիկտային, հուզական խանգարումներով, վարքի շեղումներով երեխաների հետ տարվող շտկողական աշխատանքներում տիկնիկի կիրառությամբ թերապիայի կազմակերպումը զարգացնել երեք ուղղությամբ.

1. երեխային և տիկնիկին վերագրել ***պահանջվող*** դերեր, որտեղ նրանք ունեն հարազատական փոխհարաբերություններ միմյանց հետ, և սցենար մշակել, թե ինչպիսի վարք է նրանց սպասվում միմյանց հանդեպ փոխհարաբերությունների կառուցման ժամանակ,

2. երեխայի տիկնիկին վերագրել **սուբյեկտիվ** դեր, որտեղ նա է երեխայի «ներկայացուցիչը» և խոսում է առաջին դեմքով երեխայի անունից,

3. երեխային և տիկնիկին վերագրել **խաղարկվող** դերեր, որոնք առավելագույն չափով կհամապատասխանեն տվյալ երեխային: Օրինակ, եթե երեխան սիրում է բժշկական գործիքով խաղաղ, իրեն վերագրեն բժշկի դեր, իսկ տիկնիկը կլինի նրա հիվանդը:

Հետաքրքիր է, որ տիկնիկաթերապիայի խաղային տեխնոլոգիայում դերին վերաբերող իրավունքներն ու պարտականությունները կարգավորելու, երեխայի վարքը շտկելու համար տարբեր մանիպուլատիվ ձևեր են նկարագրում, որտեղ ոչ միայն երեխային կարելի է վերագրել տարբեր դերեր, այլև տիկնիկը կարող է ևս լինել երեխա, ընկերուհի, տատիկ, մայր, ընդհուպ մինչև երեխայի երևակայության աշխարհում ծնված հեքիաթի հերոս և այլն:

Ուսումնասիրելով երեխայի վարքի պատճառականությունը՝ առհասարակ կարելի է նկատել, որ դրանում բազմաթիվ դրսևորումներ հիմնականում պայմանավորված են երեխայի տարիքային առանձնահատկություններով, տարիքային ճգնաժամերով և խառնվածքի յուրահատկությամբ, միջավայրի գործոնով [1, 279]:

Արվեստի մանկավարժության մեջ տիկնիկաթերապիային վերագրում են առանձնահատուկ ֆենոմեն, որը երեխայի սոցիալականացման խնդիրների լուծման ելքերը տիկնիկի միջնորդությամբ գտնելն է, կարգավորելը ոչ միայն արդեն պատրաստի սցենարներով, այլև երեխայի օգնությամբ այն անհատական-դիդակտիկ նշանակությամբ տվյալ խնդրի համար ստանալով:

Երբ տիկնիկով խաղը կազմակերպվում է խմբի համար, և երբ այն սկսվում է, երեխաները միմյանցից ունենում են սպասումներ, ինչպես նաև յուրաքանչյուր երեխա ինքն իրենից ևս ունի սպասումներ: Երեխան սկսում է սպասումներ ունենալ նաև իր տիկնիկից՝ մի դեպքում իր հետ հարմարման, մյուս դեպքում՝ իրեն և մյուսներին լսելու, որոշ դեպքերում՝ վարքի կարգավորման, հա-

ջորդիվ՝ խորհուրդ վերցնելու համար: Կրկնօրինակելով իրեն շրջապատողների վարքը, երեխան հաճախ իրավիճակից դուրս է բերում վարքի նոր օրինաչափություններ, որոնք անձամբ իրենն են [5]: Հատկապես այս հանգամանքը օգնում է, որ երեխան ճիշտ ըմբռնի իրեն շրջապատող սոցիալական միջավայրում մարդկանց միջև եղած միջանձնային հարաբերությունները, այդ թվում՝ հատկապես ներընտանեկան դերերի կառուցվածքը, քանի որ ընտանիքում է տեղի ունենում նրա սոցիալականացման առաջին փորձը: Երեխան հաճախ կարող է դատողություններ անել տիկնիկի վարքային դրսևորումների մասին, խրատել, խորհուրդ տալ նրան, գնահատել նրա արարքը՝ ներկայացնելով նոր վարքի պահանջներ՝ այսպիսով նաև ներկայացնելով իր խնդիրն ու դրա լուծման մեխանիզմները: Ընդ որում՝ տիկնիկն այստեղ հանդես է գալիս իբրև խորհրդանիշ, որին երեխան կարող է վերագրել նաև հակազդելու սցենար:

Այսպիսով՝ տիկնիկաթերապիայի սցենարի մեջ պետք է առկա լինի ակնկալիքների երեք ուղղություն՝ ակնկալիք տվյալ դերից, որը վերագրելու ենք երեխային, ակնկալիք տիկնիկից, ակնկալիք նրանց շրջապատողներից և նույն հաջորդականությամբ հակառակը՝ երեխայի ակնկալիքը խաղից, տիկնիկից և իրեն շրջապատողներից: Երեխայի վարքի շտկման կամ կարգավորման գործառույթներ իրականացնելու համար տիկնիկաթերապիա կազմակերպելիս անհրաժեշտ է խորությամբ ուսումնասիրել և վերլուծել խնդիրը, դուրս բերել փոփոխությունների ենթակա խնդիրները և սցենարը կառուցել դրանց հիման վրա, որտեղ կարևոր կլինի փոփոխությունների խորության աստիճանը՝ ամբողջական, թե մասնակիորեն, չափը, կոնկրետությունը, հստակությունը, հակասականության աստիճանը և այլն:

Տիկնիկաթերապիան կարելի է անցկացնել ինչպես առանձին, միայն տվյալ երեխայի և տիկնիկի համար նախատեսված սցենարով, այնպես էլ խմբային սցենարով, որտեղ համանման խնդիրները տիպավորվել և սցենարային լուծում են գտել երեխայի և տիկնիկի փոխհարաբերությունների կառուցման, դրա վերանայման և շտկման տեսանկյունից: Տիկնիկաթերապիայի իրականացման համար կարևոր են մի քանի ասպեկտներ՝ սցենարը և երեխան՝ որպես դրա կատարող, մյուս մասնակիցները, նրանց ստանձնած դերերը, ինչպես նաև խաղը ներկայացնելու մասշտաբայնությունը. միայն իր համար է երեխան խաղում, թե հանդիսատես կա: Տիկնիկաթերապիան հաճախ ներառում է իմագոթերապիայի և դրամաթերապիայի տարրեր, որոնցում ևս անձի անհատական և հասարակական վարքի ձևավորման, որոշ դեպքերում շտկման աշխատանքները կատարվում են դերախաղի օգնությամբ: Հետաքրքիր է նաև տիկնիկի պատ-

բաստման աշխատանքը տիկնիկաթերապիայում, երբ երեխան ազատորեն կարողանում է հորինել, գծագրել, նկարել, թղթերից, կտորներից, թելերից պատրաստել այն տիկնիկը, որի հետ կցանկանար զրուցել:

Դիտարկենք տիկնիկաթերապիայի իրականացման մի քանի տարբերակներ:

1. Տիկնիկաթերապիայի էքսպրեսիվ-նախագծային արտտեխնոլոգիա: Այս ձևաչափում կարևոր է տիկնիկին շնչավորող միջոցը՝ երեխայի ձեռքը, որտեղ յուրաքանչյուր մատին վերագրվում է որևէ դեր, և դրան համապատասխան՝ գունավոր թղթերից պատրաստվում են տիկնիկի կերպարներ, որոնք պետք է երեխան հագցնի մատներին և թղթե տիկնիկները խաղացնելու օգնությամբ պատմություններ հորինի: Այս տիկնիկաթերապիայի տեխնոլոգիան կարծես նպատակ ունի երեխայի մեկ ափի մեջ տեղափոխել «ամեն ինչ քո ձեռքերում է» բանաձևը:

2. «Խամաճիկները խաղում են իմ դերը»: Այս տեխնոլոգիայի հիմքում դրված է այն միտքը, որ երեխան պետք է փափուկ ծեփամածիկի կամ կտորների, թելերի, այլ նյութերի միջոցով պատրաստի իր կերպարային տիկնիկը, որի վերջույթներին ամրացված թելերով պետք է սեփական կերպարի դերը վերագրել նրան և խաղացնել: Տեղի է ունենում կերպարային նույնականացում: Տիկնիկի մեջ ոչինչ չենք կարող փոխել, եթե երեխան չի ցանկանում դա փոխել իր ներսում: Խամաճիկ-տիկնիկը նոր գաղափար է մուտքագրում երեխայի մեջ, որ նա զբաղված է ինքնակերտմամբ, ինքնաուսումնասիրմամբ և այլն [3, 102]:

3. Արքետիպային տիկնիկներ: Դրանք միջնորդ են հանդիսանում երեխայի համար՝ հաղթահարելու դիմացինի հետ շփվելու վախը, ամաչկոտությունը, հուզականությունը: Դրանք կարծես օգնականներ են, որոնց միջնորդությամբ երեխան հաղորդակցական նոր փորձ է ձեռք բերում, ազատվում լարվածությունից, ներքին կաշկանդվածությունից և այլն: Այս տիկնիկների նշանակությունը հատկապես կարևոր է երեխայի հետ զրույցի ընթացքում դուրս բերված խնդրի լուծման տեսանկյունից: Կարելի է գրել նպատակը, օրինակ՝ «Ես այլևս չեմ վախենում մթից» կամ «Խոսելիս էլ չեմ կարմրի», տեղադրել փոքրիկ տուփի մեջ և թաքցնել այս «նվիրական» ցանկությունը կտորե տիկնիկի մարմնում:

Դեռահասության տարիքում երեխայի անձի ձևավորման և զարգացման բուռն գործընթացների առաջ բերած խնդիրները երբեմն անտեսված են մնում՝ հետագայում վերաձևավորվելով լուրջ խնդիրների: Այս տարիքային խմբի համար տիկնիկաթերապիայի բացառիկ ձևերից է տիկնիկային թատրոնը: Այստեղ երեխաներն են հորինում տիկնիկները և հատուկ նրանց համար գրում սցենար-

ներ, ներկայացում պատրաստում: Այն ամենը, ինչ կթաքցնեն կամ չեն բարձրաձայնի այս տարիքային խմբի ներկայացուցիչները, վստահում են տիկնիկներին և հնչեցնում բեմից: Այսպիսով՝ երեխաները միաժամանակ արտահայտում են իրենց հույզերը՝միահյուսելով հեքիաթը իրականության հետ: Տիկնիկաթերապիայի այս ձևաչափը տարբերվում է սովորական տիկնիկային թատրոնից նրանով, որ այստեղ գրվում են հատուկ իրավիճակին բնորոշ սցենարներ երեխաների կողմից, որը մեծ կարևորություն ունի ոչ միայն շտկողավերականգնողական գործառույթներ իրականացնելու համար, այլև երեխայի ազատ մտքի ձևավորման հարցում: Տիկնիկային թատրոնը երեխային հնարավորություն է տալիս ազատվելու իրեն կաշկանդող բարդույթներից և ինքնադրսևորվելու: Այստեղ լավագույն տարբերակ կարող է լինել ինտերակտիվ թատրոնը [4, 18]:

Տիկնիկաթերապիայի թատերական ձևաչափը իր բնույթով հնարավորություն է տալիս համատեղելու արվեստի մի քանի ճյուղեր՝ երաժշտություն, նկարչություն, պար, գրականություն, դերասանություն, որն էլ իր հերթին բոլոր կողմերից ազդեցություն է թողնում երեխայի սոցիալականացման վրա: Երեխաների համար թատերական գործողություններին մասնակից լինելը հնարավորություն է տալիս ոչ միայն տարբեր դերերում հանդես գալու, այլև պատկերացնելու իրեն տարբեր միջավայրերում [2, 125]:

Այսօր գոյություն ունեն տիկնիկաթերապիայի ներառական ձևաչափեր, տիկնիկային թատրոնի հատուկ տեսակներ, որոնց մասնակցում են ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող երեխաներ: Արվեստաբուժության նմանօրինակ ներառական ճյուղերում, ինչպիսին է տիկնիկաթերապիան, իբրև փոփոխությունների, երեխաների ունեցած խնդիրների լուծման հարթակ՝ օգտագործվում է թատրոնի բեմը՝ որպես ինքնատիպ մանկավարժական միջավայր, ուր կենսաբանորեն առողջ երեխաների կողքին միաժամանակ ներկայանում են տարբեր խնդիրներ ունեցող երեխաներ: Մեկ ներկայացման շրջանակներում նրանց միավորում են ընդհանուր արժեքները, համախմբվում են և ստեղծում իրենց ուրույն, համատեղ աշխարհը:

Տիկնիկաթերապիան օգնում է զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին լուծել մի շարք խնդիրներ, ինչպիսին կարող են լինել թերարժեքության բարդույթը, կոնֆլիկտայնությունը, սթրեսակայունությունը և այլն:

Տիկնիկաթերապիան երեխային հնարավորություն է տալիս բացահայտելու ինքն իրեն, փոխելու վերաբերմունքն իր և իրեն շրջապատող մարդկանց հանդեպ:

Տիկնիկի հետ խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է:

Երեխայի գործունեության գլխավոր շարժառիթը մեծերի կյանք մտնելու, ներթափանցելու ցանկությունն է: Տիկնիկաթերապիայի ժամանակ դերային-սյուժետային խաղի միջոցով երեխան պարզում է իր տեղը մեծերի հարաբերություններում: Խաղը իր և մեծերի դիրքերը համեմատելու հնարավորություն է ընձեռում: Դերային-սյուժետային խաղի միջոցով երեխայի մոտ ձևավորվում է կամածին վարք: Նա սովորում է որոշակի իրադրության մեջ իր վարքը ենթարկել շրջապատի պահանջներին, զարգանում է երեխայի արդյունավետ գործունեությունը: Խաղի ընթացքում երեխան, հասկանալով, որ ինքը փոքր է, փորձում է կատարել մեծի դեր: Սակայն դրա արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է մեծ դառնալու, հասարակայնորեն արժեքավոր դեր կատարելու շարժառիթը:

Տիկնիկաթերապիայի միջոցով երեխաները հաղթահարում են ներփակվածությունը, ամաչկոտությունը, նույնիսկ կակազելը և խոսքային արգելակվածությունը, որոնք կարող են բերել սոցիալականացման դժվարությունների, վարքի կամ հոգեհուզական լուրջ խանգարումների:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ տիկնիկաթերապիան ունի բազմակողմանի ազդեցություն երեխայի սոցիալականացման խնդիրների լուծման և կարգավորման գործում:

- Տիկնիկաթերապիան յուրահատուկ արտտեխնոլոգիա է, որի բնույթը օգնում է երեխայի և մասնագետի համատեղ ուժերով ստեղծված գործողությունների ամբողջության շնորհիվ ներազդել երեխայի վրա, նպաստել հաղորդակցման հմտությունների, շփվելու կարողությունների, մյուսներին հասկանալու և մյուսների հուզական վիճակը համարժեքորեն արձագանքելու կարողությունների զարգացմանը:
- Տիկնիկաթերապիայի ձևերից մեկը՝ տիկնիկային թատրոնը, երեխաների համար համարվում է կյանքի լավագույն դպրոց. այն հանդես է գալիս որպես շրջակա միջավայրի, կյանքի, աշխարհի մասին տեղեկատվության աղբյուր:
- Տիկնիկաթերապիայի մանկավարժական մոտեցումն ուղղված է ոչ միայն երեխայի անձի առողջապահպան գործողություններին, այլև երեխայի սոցիալական հարմարմանը: Տիկնիկը երեխային հնարավորություն է տալիս կրելու այնպիսի սոցիալական դերեր, որոնք կուզենար փորձել, փոփոխել կամ որոնց կցանկանար ինչ-որ բան ասել:
- Տիկնիկաթերապիան օգնում է զարգացնել երեխայի մարդկային որակները, ձևավորել արժեքային համակարգը:

- Տիկնիկաթերապիան օգնում է երեխային ձեռք բերել հուզական և սոցիալական ինտելեկտ՝ կարգավորելով սեփական վարքը, զգացմունքները հասկանալ իրեն և շրջապատողներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Ն. և ուրիշներ, Սոցիալական մանկավարժություն, Բուհական ձեռնարկ, Երևան, 2017, ԵՊՀ հրատ.:
2. Медведева Е., Артпедагогика и арттерапия в специальном и инклюзивном образовании, М., «Юрайт», 2019, с. 272.
3. Татаринцева А., Куклотерапия в работе психолога, педагога и логопеда, Речь, 2007, 102 с.
4. Усова Т. В. (ред.), Куклотерапия как метод реабилитации, Методическое пособие, Саратов: Изд. ГНПУ ОРЦ для детей-инвалидов, 2008, 36 с.
5. https://psy.su/feed/5180/ Арт-терапевтическая методика «Позитивная куклотерапия», 23.09.2020.
6. https://studfile.net/preview/2957369/page:4/, Л. Г. Гребенщикова, Основы куклотерапии, Учебно-методическое пособие, Пермь, 2009, 20.09.2020, 18.10.2020.

PUPPET THERAPY AS A PEDAGOGICAL TOOL FOR SOLVING PROBLEMS OF CHILD SOCIALIZATION

Hayrapetyan Lusine

Yerevan State University

Summary

Brief introduction: Puppet therapy is one of the most widely used art technologies in art therapy today, which reveals the phenomenon of puppets in a new sense in art pedagogy as a new pedagogical “tool” from the aspect of role behavior development, relieving emotional tension, preventing or correcting behavioral disorders. Its different types are distinguished not only by the way they are performed, but also by the direction of the work with the child: corrective, informative, regulatory, etc. Puppet therapy is often intertwined with imagotherapy and drama therapy, where one of the most important issues in the development of a person's personality- the study of his image, becomes a priority. Puppet therapy is intended for children of all ages, but for children of different ages, its role, significance and impact, the functions performed are different. This interesting art technology is implemented individually and in groups. Puppet therapy has a multifaceted effect on the regulation of child behavior and emotional disorders.

Keywords: Puppet therapy, imagotherapy social status, social role, emotional disorders, role behavior, social behavior, puppet theater, puppet show, required, subjective, feature roles, inclusive theater.

The aim of the research conducted within the framework of the article is to identify puppet therapy as an auxiliary tool used in the pedagogical process to overcome the barriers of socialization of the child and to develop role behavior.

The novelty of the research. The importance of puppet therapy in terms of development, correction and emotional regulation of the child's role behavior has been studied and analyzed.

Conclusion: Puppet therapy scenario is a set of activities created by the pedagogue together with the child, which contributes to the development of communication skills,, understanding the emotional state of others, the ability to respond adequately. It can be a great pedagogical tool in developing a child's role-playing behavior.

References:

1. Harutyunyan N. and others, Social pedagogy, Textbook, Yerevan, 2017.

2. Medvedev E., Pedagogic and art therapy in special and inclusive education, Moscow, Yurayt, 2019, p.272.

3. Tatarintseva A., Doll Therapy in the Work of a Psychologist, Teacher and Speech therapist, Speech, 2007, 102 p.

4. Usova T. V. , Doll Therapy as a method of rehabilitation, Methodological guide, Saratov: Publishing house of GNPU ORC for disabled children, 2008, 36 p.

5. https://psy.su/feed/5180/ Art therapy technique "Positive doll therapy", 23.09.2020.

6. https://studfile.net/preview/2957369/page:4/ , L. G. Grebenshchikova, Fundamentals of doll therapy, Educational and methodical manual, Perm, 2009, 20.09.2020, 18.10.2020.

КУКЛОТЕРАПИЯ КАК ПЕДАГОГИЧЕСКОЕ ВСПОМОГАТЕЛЬНОЕ СРЕДСТВО ФОРМИРОВАНИЯ РОЛЕВОГО ПОВЕДЕНИЯ И ПРЕОДОЛЕНИЯ ВЫЗОВОВ СОЦИАЛИЗАЦИИ РЕБЕНКА

Лусине Айрапетян

Ереванский государственный университет,

Армения

Аннотация

Краткое введение. Кукольная терапия – одна из наиболее широко используемых сегодня арт-технологий в арт-терапии, которая в художественной педагогике по-новому раскрывает феномен кукол с точки зрения формирования ролевого поведения ребенка, снятия его эмоционального напряжения, предотвращения или исправления поведенческих отклонений, рассматривается как новый педагогический «инструмент». Ее виды различаются не только по способу выполнения, но и по направленности работы с ребенком – корректирующей, познавательной, нормативной и т.д. Куклотерапия часто переплетается с имаготерапией и драматерапией, где также один из важнейших вопросов формирования личности человека – изучение его образа – становится первостепенным. Куклотерапия предназначена для всех возрастных групп, но для детей разного возраста ее роль, значение и влияние, выполняемые функции различны. Эта интересная арт-технология реализуется индивидуально и в группах.

Ключевые слова: куклотерапия, имаготерапия, социальный статус, социальная роль, психические расстройства, ролевое поведение, социальное поведение, кукольный театр, кукольный спектакль, кукла-образ, обязательные, субъективные, игровые роли, инклюзивный театр.

Куклотерапия имеет разностороннее влияние на регуляцию эмоциональных расстройств и поведения ребенка.

Целью исследования, проведенного в рамках статьи, является выявление куклотерапии как вспомогательного средства, используемого в педагогическом процессе для формирования ролевого поведения и преодоления барьеров на пути социализации ребенка.

Новизна исследования. Изучено и проанализировано значение куклотерапии с точки зрения формирования, коррекции и эмоциональной регуляции ролевого поведения ребенка.

Выводы. Сценарий куклотерапии – это комплекс мероприятий, созданный педагогом совместно с ребенком, который способствует развитию его коммуникативных навыков, пониманию эмоционального состояния окружающих, способности адекватно реагировать на них.

Куклотерапия может стать отличным педагогическим инструментом в формировании ролевого поведения ребенка.

Список использованной литературы

1. Арутюнян Н. и другие, Социальная педагогика, вузовское пособие, Ереван, 2017.

2. Медведева Е., Артпедагогика и арттерапия в специальном и инклюзивном образовании, М., Юрайт, 2019, с. 272.

3. Татаринцева А., Куклотерапия в работе психолога, педагога и логопеда, Речь, 2007, 102 с.

4. Усова Т.В. (ред.), Куклотерапия как метод реабилитации, Методическое пособие, Саратов: Изд. ГНПУ ОРЦ для детей-инвалидов, 2008, 36 с.

5. https://psy.su/feed/5180/ Арт-терапевтическая методика «Позитивная куклотерапия», 23.09.2020.

6. https://studfile.net/preview/2957369/page:4/, Л.Г. Гребенщикова, Основы куклотерапии, Учебно-методическое пособие, Пермь, 2009, 20.09.2020, 18.10.2020.

Материал был представлен и отправлен на рецензию: 25.09.2020
Принято к публикации: 16.10.2020
Рецензент: канд. пед. наук, ассистент Мери Аветисян

The material was submitted and sent to review: 25.09.2020
Was accepted for publication: 16.10. 2020
Reviewer: PhD, Assistant Mary Avetisyan